

# ԾՐԱԳԻՐ

ԱՆՎՈՂՆԱԶԱՐԱՎՈՐՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԱԲԱ-  
ՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Մանկավարժական ինսիտուտների համար

Հաստատված և ԽՍՀՄ-ի ժնիւ-իմ կից  
Բարձրագույն Դպրոցի Համամբարքե-  
նական Կոմիտեի կողմից

ԽՍՀՄ-ի ժկն Բարձրագույն  
դպրոցի զործերի համա-  
միութենական կոմիտե

## ԾՐԱԳԻՐ

### ԱՆՎՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱ- ՍԵՆԹԱՅԻ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

#### I. ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ—  
ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՅԵՎ ԽԵԴԻՐՆԵՐԸ

Կենդանաբանության զարգացման հիմնական ետապները  
Արխտոտելը և նրա սիստեմը: Պլինիուսը: Կենդանաբանությու-  
նը միջին դարերում: Վերածնության եպոխան—փաստական  
նյութի կռւտակումը:

Սիստեմատիկայի զարգացման մետաֆիզիկական շրջանը:  
Տեսակը, վորպես կենդանաբանական սիստեմի հիմնական միա-  
վորը: Կարլ Լիննեն և նրա «Բնության սիստեմը»: Որպանիզմեն-  
սի արհեստական և բնական սիստեմը Լիննեյի հասկացողու-  
թյամբ: Լամարկը և նրա աշխատությունների նշանակությունը  
կենդանաբանության զարգացման մեջ: Կյուվիեյի տիտերի թեո-  
րիան: Մետաֆիզիկական շրջանի պատմական նշանակությունը  
բիորգիական գիտությունների մեջ:

Դարվինի ուսմունքի նշանակությունը կենդանաբանու-  
թյան զարգացման համար: Կենդանական աշխարհը, վորպես հե-  
տեղանք զարգացման պատմական յիշերաբան պրոցեսի: Հասկա-  
ցողություն տեսակի մասին դարվինիզմի լուսաբանությամբ:  
Որպանիզմենսի բնական սիստեմը, վորպես «եակների տոմարա-  
նական բաշխում» (Դարվին): Հիմնական տաքսոնոմիկ միավորնե-  
րը և նրանց անվանման կանոնները:

Կենդանաբանության խնդիրների ժամանակակիցը ըմբռնու-  
մը, վորպես մի գիտություն կենդանիների մասին, վորն ուսում-  
նասիրում և նրանց բազմազանությունը, նրանց կենսակերպի,

Եատ. խմբ.՝ Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ  
Տեխ. խմբագիր՝ Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Սրբագրիչ՝ Կ. ԳԵՏՐՈՍՅԱՆ

Գլավիսի լիազոր՝ 3-3637 պատվեր № 287, տիրաժ 300  
Հանձնված և արտադրության 1 հոկտեմբերի 1938 թ.  
Մասրուգված և ապագրելու 31 հոկտեմբերի 1938 թ.

Եանկանագրաժամկետ Խնդիրառություն տապարան, Մարգարի փ. № 17 Եկեղեցան.

Նրանց ծագման և նրանց գոյության պայմանների փոփոխման կապակցությամբ — յերկրագնդի վրա: Կենդանական աշխարհի ուսումնասիրության նշանակությունը սոցիալիստական շինարարության խնդիրների կապակցությամբ, Կենդանաբանության ուսումնասիրության խնդիրները և տեղը խորհրդային միջնակարգ դպրոցում:

### Բ. ԶԱՐԴԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԶԻՋԸ

1. Բջջի ուսումնասիրության պատմության մասին համառոտ ակնարկ: Բջջի հայտնագործման և ուսումնասիրության նշանակությունը կենդանաբանության զարգացման համար:

2. Զու և սպերմատոզուիդ: Զվի կազմությունը: Զվի կազմության տարրեր տիպերը իզո—թելո —և ցենարոլեցիտալ ձու; Սպերմատոզուիդի կազմությունը:

3. Սեռական բջիջների գոյացումը: Սեռական նախարջիջները՝ սպերմատոզոնիաներ և ովոզոնիաներ: Գոնիումների բազմացումը: Բջջի կարիոկինետիկ բաժանումը և նրա հիմնական ֆազեր՝ պրոֆազ, մետաֆազ, անաֆազ և թելոֆազ: Քրոմոզոմները, նրանց թիվը, անհատականությունը և գույքականությունը; Սեռական բջիջների հասունացումը՝ սպերմատոզոնիաների որինակի վրա: 1-ին և 2-րդ կարգի սպերմատոցիտները: Քրոմոզոմների կոնյուգացիան և աետրագների գոյացումը: Ռեզուլյցիոն և եկվացիոն բաժանում: Սպերմատիզմներ և սպերմատոզուիդի զարգացումը: Ովոզոների բնորոշ առանձնահատկությունները:

4. Բեղմնավորություն: Բեղմնավորության մորֆոլոգիան և ֆիզիոլոգիան: Սպերմատոզուիդի մուտաքը ձվի մեջ՝ բերմնավորության թաղանթի գոյացումը: Բնական պարթենոպենիզ: Արհեստական պարթենոպենիզ և անդրոզենեզ:

5. Զվի տրոհումը: Տրոհման տիպերը՝ լրիվ հավասարաչափ, անհավասարաչափ, դիսկորիտ և մակրեսային: Մորուլա և բլաստուլա: Գաստրոլացիա և զաստրոլացիայի զանազան տիպերը: Մեզոդիմի և մարմնի յերկրորդական խոռոչի առաջացումը: Դեմերմինացիայի պրոբլեմը: Ռեզուլյցիան և գետերմինացիան առողջապահության մեջ:

6. Կենդանական կանագան հյուսվածքների բջիջների կաղմությունը. եպիթելիային բջիջներ, գեղձային բջիջներ, պիզմենտային բջիջներ, շարակցական բջիջներ, հարթ և լայնակի շերտավոր մկանային թելիկներ, նյարդային բջիջներ:

### Գործնական Պարտավմաննեներ

1. Միկրոսկոպով աշխատելու տեխնիկան:

2. Զու և սպերմատոզուիդ:

3. Բջջի կարիոկինետիկ բաժանումը:

4. Սպերմատոզուիդ և ովոզոնեզ:

5. Զվի կռառորակումը:

6—9. Զանազան հյուսվածքների պրեպարատների ուսումնասիրությունը (եպիթելիում, գեղձեր, շարակցական հյուսվածք, մկանային թելիկներ, նյարդային բջիջներ):

### II. ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԻՊԸ (Protozoa)

Նախակենդանիների ընդհանուր բնութագիրը: Նրանց կաղմության և կենսագործությունների հիմնական գծերը: Նախակենդանիների բազմացման տիպերը՝ վեգետատիվ և սեռական բազմացում:

1. Սարկուդայի կազմությունը և կենսական գործուները: Դիգենտերիայի չամյորա և նրա պատոզեն նշանակությունը: Խեցիավոր արմատանիներ (Փրամինիֆերներ): Ճառագայթավորների (ռադիոլյարիաներ) և արևակենդանիների կարգերը: Խեցիավոր արմատանիների և ռադիոլյարիաների դերը յերկրագնդի կեղևակազմության մեջ:

2. Մարակավորների դասը (Mastigophora), Մարակավորների մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական բնութագրումը: Սեռական պրոցեսի ձևերը մարակավորների մոտ. իշղոգամիս և անիղոգամիա: Եղթինան, վորպես մի որդանիզմ, վորիր մեջ համատեղում և սննդառության ավտոտրոֆ և հետերոտրոֆ տիպեր: Գաղութային մարակավորներ: Մարակավորների նշանակությունը ջրավազանների պլանկտոնում: Մարակավորների



11-2878294

բի պատովեն նշանակությունը, արխապանողոմաները և նրանց առաջացրած հիմանդրությունները, լեյշմանիոգները և նրանց գեմ պայքարելու միջոցները ԽՍՀՄ-ի պայմաններում:

3. Ս պ ո ւ ս վ ո ր ն ե ր ի գ ա ս ը. (Sporozoa): Ընդհանուր բնութագիրը: Գրեզարինների կարգը և նրանց զարգացման ցիկլը: Կոկցիդիումների կարգը և նրանց զարգացման ցիկլը: Հեմոսպրեդիումների կարգը: Մալյարիայի պլազմոգիումի կենսական ցիկլը: Կոկցիդիումներն անասնաբուժության մեջ և պայքար նրանց գեմ: Յեղջուրափոր անասունների պիրոզլազմոզը: Միկրոսպրեդիումների կարգը և նրանց պատովեն նշանակությունը (թթի շերամի թրթուրի պերինան, մեղուների «փորաբինքը»):

4. Ի ն ֆ ո ւ ղ ո ր ի ա ն ե ր ի գ ա ս ը (infusoria) Խնֆուզորիաների մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական ընդհանուր բնութագիրը: Բազմացման ձևերը, սեռական պրոցեսի առանձնահատկությունները ինֆուզորիաների մոտ (կոնյուգացիա): Նստակյաց ինֆուզորիաների գաղութների առաջացումը: Խնֆուզորիաների կարգաբանությունը: Թարթիչավորների (Ciliata) և ծողների (Suctoria) յենթակաները: Թարթիչավոր ինֆուզորիաների կարևորագույն կարգերը: Պարազիտ ինֆուզորիաները: Անզուզաւորմակորների աղիքների և վորոճողների ստամոքսի ինֆուզորիաները, նրանց կազմության առանձնահատկությունները և նրանց հնարավոր գերը ծեր - կենդան գանու մարտողության մեջ:

Ժամանակակից նախակենդանիները, վորպես արդյունք միաբջիջ եակների եվոլյուցիայի տևական պրոցեսի: Նախակենդանիները վորպես առանձին բջիջ և վորպես ինքնուրույն որդանիզմ: Նախակենդանիների մարմնի չափերը: Նախակենդանիների բազմազան աշխարհի գոյությունը բարձրակարգ բազմաբջիջ կենդանիների հետ միատեղ և այդ փաստի մեկնաբանումը հատկանիշների խոտորման ուսմունքի լուսաբանությամբ: Ֆիզիոգեների հարաբերությունները նախակենդանիների տիպերի մեջ:

## Գործնական պարապմունքներ (դիտումներ միկրոսկոպի տակ)

- Կենդանի ամյորա՝ շարժումները, սննդառությունը, կծկող վակուոլի գործունեությունը:
- Խեցիավոր արմատանիներ:
- Եվգլենա (կենդանի մատերիալ), արխապանողոմաներ առնետի արյան, գորտի կամ ձկների արյան մեջ:
- Գրեզարինները զարգացման արբեր աստիճաններում:
- Պարամեցիում և ուրիշ թարթիչավոր ինֆուզորիաներ. (կենդանի մատերիալ): Կենդանիների գանձակի ինֆուզորիաները:

## III. ՍՊՈՒՆԳՆԵՐԻ ՏԻՊԸ (Spongia)

Սպունգները, վորպես բազմաբջիջ կենդանիների պրիմիտիվ տիպ: Սպունգների մորֆոլոգիական բարդացման զանազան աստիճանները՝ ասկոն, սիկոն, և լեյկոն տիպերը: Ոճիքավոր եպիթելիումը և նրա նշանակությունը սպունգների կենսագործունեցության համար: Մեղովլեան, նրա բջջային տարրերը և կմախքային կոյացությունները: Սպունգների անսեռ և սեռական բազմացումը: Գեմոնուների առաջացումը քաղցրահամ ջրերի սպունգների մոտ: Սպունգների լուսակային զարգացումը: Սպունգների բիոզոգիան և աշխարհագրական տարածումը: Սպունգների կլասիֆիկացիան (կրային և վոչ-կրային սպունգներ) և նրանց փելոցենիան: Սպունգների արդյունագործական նշանակությունը (բաղյագա, հունական սպունգ):

## Գործնական պարապմունքներ

- Սպունգի հատածի ուսումնասիրություն:
- Սպունգների կմախքային ելեմենտները:

## IV. ԱՆԵԽՈՐՃԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊԸ (Coelenterata)

1. Հիդրոիդների գանձակի (Hydrozoa):

Հիդրայի կազմությունը, վորպես հիդրոլուների դասի ներկայացուցիչ՝ նրա կենսակերպի կապակցությամբ: Հիդրայի անսեռ և սեռական բազմացումը:

### Հիդրոիդների յենթագաւոր (Hidroidea):

Ծովային հիդրոիդ պոլիպներ: Ծովային հիդրոիդների գաղութայնությունը և սերունդների հաջորդականությունը: Պոլիպը և մերուզան, վորպես աղեխորշավորների կազմության հիմնական տիպեր: Սիֆոնոֆորների յենթագաւոր — լողացող պոլիմորֆիկ գաղութների առաջացում:

2. Սցիֆոիդների դասը (Scyphozoa): Նրանց անատոմա-ֆիզիոլոգիական բնութագիրը և զարգացումը: Սցիֆոիդ և հիդրոիդ աղեխորշավորների կազմության ու զարգացման համեմատությունը:

3. Կորալյան պոլիպների դասը (Anthozoa): Անատոմա-ֆիզիոլոգիական բնութագիրը: Ութձառագայթավոր և վեցձառագայթավոր կորալներ: Մենակյաց պոլիպների (ակտինիա) և գաղության կորալների առանձնահատկությունները: Կորալյան պոլիպների աշխարհագրական տարածումը: Կորալների նշանակությունը յերկրակեղեղի գոյացման մեջ, կորալյան սիֆեր և կըդղիներ:

Հիդրոիդների, սցիֆոիդների և կորալյան պոլիպների կազմության բնորդանուր գծերը և նրանց միավորումը խայթողների յենթատիպի մեջ (Cnidaria):

4. Սանրավորների դասը (Ctenophora): Սանրավորների անատոմիական-ֆիզիոլոգիական բնութագիրը և եկոլոգիան:

Աղեխորշավորների սաղմանային զարգացումը: Տրոհման առանձնահատկությունները և թերթերի գոյացումը: Պանուլայի ստաղիան պոլիպների զարգացման ժամանակի Սանրավորների զարգացման առանձնահատկությունները (գետերմինատիվ տրոհում):

Ֆիլոպենետիկ հարաբերությունները աղեխորշավորների և սպունգների տիպերի սահմաններում: Բազմաքջականության ծագման խոնդիրը: Հեկլելի և Մեջնիկովի թերթեաները: Սպունգների տիպը, վորպես բազմաքջիների առանձնացած ճյուղ, վոր հետազ զարգացում չի ունեցել: Աղեխորշավորների ֆիլոպենիան: Բարձրակարգ բազմաքջիների զաստրուլայի ստաղիան սաղմանային զարգացման ժամանակի վորպես հնագույն աղեխորշավորների հետ նրանց ունեցած ֆիլոպենետիկ կապի վկայություն:

### Գործնական Պարապմունենքներ

1. Հիդրա (գիտումն կենդանի մատերիալի վրա և կտրվածների ուսումնամիջուն):
2. Գաղութային հիդրոիդ պոլիպներ և հիդրոմեղուզաներ:
3. Սցիֆոիդ մերուզաներ:
4. Կորալյան պոլիպներ (սոտալ պրեպարատներ և կտըրվածքներ):

### V. ՎՈՐԴԵՐԻ ՏԻՊԸ (Vermes)

Վորդերի խմբի մեջ միավորված կենդանիների ընդհանուր հատկանիշները: Զանազան հետազոտողների հայցքներն այս խմբի կենդանիների կլասիֆիկացիայի մասին, վորոնք հաճախ ներկայումս բաժանում են տարրեր թվով ինքնուրույն տիպերի:

#### I. ՏԱ.ՓԱ.Կ ՎՈՐԴԵՐԻ ՅԵՆԹԱՏԻՊԸ (Platodes s. Plathelminthes):

Յենթատիպի ընդհանուր բնութագրությունը:

1. Թարթիչավոր վորդերի դասը (Turbellaria):  
Քաղցրահամ ջրերի պլանարիան, վորպես սուրբելյարիաների ներկայացուցիչ: Անատոմա-ֆիզիոլոգիական բնութագիրը: Պրիմիտիվ կազմությունը կարծեցյալ բարդ կազմության մեջ: Կարգաբանությունը: Ռեզեներացիայի յենթարկվելու տուրբելյարիաների ընդունակությունը: Տուրբելյարիաների եկոլոգիան և տարածումը:

2. Ծճանների դասը (Trematodes): Անատոմա-ֆիզիոլոգիական բնութագիրը: Ծծանների առանձնահատկությունները նրանց պարագիտային կենսակերպի հետ կապված: Մոնոգենետիկ և դիգենետիկ ծծաններ: Դիգենետիկ տրեմատոտների զարգացման ցիկլը լարվային ծծանի որինակի վրա: Պայցքարը ֆասցիուզի դիմ ԽՍՀՄ-ում: Մյուս ծծանները (նշտարանմանները և արյան յերկերանիները):

3. Ցերիդորդների դասը (Cestodes): Անատոմա-ֆիզիոլոգիական բնութագրություն ժամանակակից վորդերի: Ժապավենաձև վորդերի բազմաքջիների զաստրուլայի ստաղիան (հիվանդաբեր) նշանակությունը մարդու և կենդանիների համար: Տերերի փոխանակելու յերևույթի բիոլոգիական նշանակայություն:

կությունը: Ժապավենաձև վորդերի գլխավորագույն ներկայացացացիչները, խողի և յեղան յերիզորդները, լայն ժապավենագույնը, ցենուրը, եխինոլոկներ, թղուկ յերիզորդը: Ճճվային հիվանդությունների դեմ պայքարի միջոցները:

4. Տափակ վորդերի յենթատիպի լրացումը: Նեմերաբինների դասը (Nemertini): Նեմերաբինների անատոմա-ֆիզիոգիական ժամանակ ընութեպրաւթյունը, նրանց բիոլոգիան և աշխարհագրական տարածումը:

Տափակ վորդերի ֆիզոգենիան: Տափակ վորդերի ծագման հիպոթեզան սողացող սանրավորներից (ժամանակակից սողացող սանրավորների համեմատությունը տուրբելյարիաների հետ):

### II. ԿՈՐ ՎՈՐԴԵՐԻ ՅԵՆԹԱՑԻՊԸ (Nemathelminthes)

Յենթատիպի ընդհանուր հատկանիշները:

1. Նեմատոդների դասը (Nematodes): Նրանց կաղապարի որինակի վրա: Ասկարիդի զարգացման ցիկլը: Ասկարիդի զարգացումը՝ սաղմի «մինչ հասունացման» բիոլոգիական նշանակությունը և թրթուրի միզրացիան: Մյուս պարագիտ նեմատոդները, մանկական սոստրիցան, մազագլուխը, սվայնիկը, տրիխինան, սիշտան. Նրանց բիոլոգիան և պայքարի միջոցները նրանց դեմ: Պրոֆիլակտիկայի կարևորագույն նշանակությունը հելմինտոպահների դեմ պայքարելու խնդրում և զպրոցի դերը այդ գործում: Ազատ ապրող նեմատոդներ և նեմատոդները՝ բույսերի պարագաներ:

2. Մազավորների դասը (Cordiacea): Մազավորների բիոլոգիան, նրանց զարգացման ցիկլը և նրանց հետ կապված նախապաշարումները:

Կլոր վորդերի ֆիլոգենիան և նրանց կապը կենդանական աշխարհի մյուս խմբերի հետ:

### III. ՈՂԱՎՈՐ ՎՈՐԴԵՐԻ ՅԵՆԹԱՑԻՊԸ (Annelides)

Ընդհանուր ընութեպիրը:

1. Խոզանավորների դասը (Chaetopoda): Անձրևագորդները վորպես խոզանավորների ներկայացուցիչ, նրա կաղմու-

թյունը, նրա մարմնի յերկրորդ խոռոչը, մետամերիան, արյունատար համակարգը, մետանեֆրիտները: Ողավորների կարգաբանությունը:

Նախորդ կապը յենթատիպիրը (Archiannelides): Ընդհանուր ընութեպիրը: Բազմազան սղագության և կինսակերպի բնութագիրը. գլխի ողակի կաղմության առանձնահատկությունը, պարապոդիումները և նրանց ֆունկցիաները: Պոլիխետի զարգացումը, տրոնման և սաղմնային թերթերի զույցման առանձնահատկությունները, թրթուրային ձևը՝ տրոխոսիան և նրա ֆիլոգենետիկ նշանակությունը: Պոլիխետների անսեռ բազմացումը: Պոլիխետների տարածումը և նրանց եկոլոգիան (սողացող, նստակյաց և պլանկոտնային ձևերը): Սակավական սղագությունը յենթագության (Oligochaeta). Նրանց կաղմության, եկոլոգիայի, բազմացման և զարգացման առանձնահատկությունները, վորոնցով տարբերվում են բազմախողանավորներից: Անձրևագորդների նշանակությունը հողագոյացության պրոցեսներում:

2. Տղրուկների դասը (Hirudinea): Անատոմա-ֆիզիոլոգիական բնութագիրը՝ կենսակերպի կապակցությամբ: Բժշկական աղբուկ: Տղրուկների բազմացման առանձնահատկությունները:

3. Եխիուրիդների դասը (Echiurida): Ընդհանուր ընութեպիրը: Սեռային գիմորֆիզմը բօնելիայի մեջ և նրա առանձնահատկությունները:

Ողավոր վորդերի ծագումը: Նրա ծագման թերթիան հասպույն տուրբելյարներից և արտխոփորանման նախահայրերից: Աղեխորշի (ցյոլոմ) ծագման խնդիրը: Ֆիլոգենետիկ հարաբերությունը ողավոր յենթատիպի սահմաններում:

4. Անիկավորների դասը (Rotatoria): Անիկավորդերի մարմնի կաղմությունը և կենսակերպը: Պարթենոպեները և սեռունդների հաջորդումը: Անիկավորդերի նշանակությունը քաղցրահամ ջերերի պլանկոտնում: Անիկավորդերի դասի գրության հարցը սիստեմատիկայի մեջ:

IV. ՎՈՐԴԱՆՄԱՆՆԵՐԻ ԿԱՄ ՇՈՇԱՓՈՒԿԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՆԹԱՏԻՊՔ

(Vermidea)

ՅԵՆԹԱԹԻՊՔԻ ԲՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԼԱՆԻՇՆԵՐԸ:

1. Մամուավոր գերի դասը (Bryozoa): Մամուավորգերի կազմության ընդհանուր բնութագիրը կիսասպիրալի կապակցությամբ: Մամուավորգերի գաղտնաթայնությունը և անսեռ բազմացումը: Քաղցրահամ ջրերի մամուավորգերի ստատորլաստները:

2. Ուսավոտների դասը (Brachiopoda): Նրանց կազմության և կենսակերպի հիմնական գծերը: Ուսավոտների պալեոնտոլոգիական հնությունը և նրանց ժամանակակից տարածումը:

Վորդնանմանների ֆիլոգենիան և նրանց կապը վորդերի հետ:

Գործնական պարապմունքներ

1. Քաղցրահամ ջրերի պլանարիա (կենդանի մատերիալ և պրեպարատ):

2. Նշառլաման և լյարդի ծծաններ (կենդանի մատերիալ և պրեպարատ): Ծծանների զարգացումը (սեղիաներ և ցերկարիաներ քաղցրահամ ջրերի փափկամարմինների մարմնից):

3. Ժապավենաձև վորդեր—սկոլեկոններ և պրոզոոստիգներ յերիզորդների, եխինոկոկների ժապավենանման ձևերը, բշտիկանման ձևերը:

4. Ասկարիդի հերձումը և լայնակի կտրվածքը: Տրիխինալի դիտումը:

5. Անձրևավորդ. կենդանի մատերիալ (դիտել շարժման մեխանիզմը և արտաքին գրգռականության ուեակցիան), հերձումը, դիտումը լայնակի կտրվածքների:

6. Բազմաթողան վորդերի (ներոիդ) լայնակի կտրվածքը և գլխի ծայրը:

7. Տպուկներ—հերձում և լայնակի կտրվածքների դիտում

8. Անիվավորգեր (կենդանի մատերիալ):

9. Մամուավորգեր (տոտալ պրեպարատներ):

VI. ՓԱՓԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԻՊԸ (Mollusca)

Փափկամարմինների արտաքին բնորոշ գծերն անատամի կամ մարգարտախեցու որինակի վրա: Մարմնի փափուկ ծածկությները, թիկնոցը և թիկնոցային խոռոչը, խեցին, վոտքը: Փափկամարմինների ներքին կազմությունը անատամի որինակի վրա:

1. Կողաներ վ փափկամարմինների դասը (Ampheinevra): Բնութագիրը: Խեցին և նյարդային համակարգի կազմության առանձնահատկությունները: Եկոլոգիան և տարածումը:

2. Փորութանի փափկամարմինների դասը (Gastropoda): Անատոմա-փիլոլոգիական բնութագիրը: Ասիմետրիան, վորպես փորութանիների բնորոշող գիծ և նրա ծագումը: Փորութանիների կարգաբանությունը և նրանց հարմարեցումը քաղցրահամ ջրերի և ցամաքի կենսակերպին: Խիունջները և կողինջները վորպես գյուղատնտեսության վասառուներ: Ծովային փափկամարմինների եկոլոգիական հարմարվողական ընդունակությունները այն ձևերի մոտ, վորոնք ապրում են ծովային ծլքիանքների շերտում: Թիվավոտավորները և նրանց առանձնահատկությունները ապատ լողալու կենսակերպի կապակցությամբ: Առջևախորհրդական փորութանիների քաղցրահամ ջրերում ապրող ներկայացուցիչների առանձնահատկությունները: Փորութանիների զարգացումը. վելիքերների թրթուրը:

3. Թերթախոսի կավոր փափկամարմինների դասը (Lamellibranchiata): Ընդհանուր ակնարկ նրանց կազմության մասին: Խեցին կազմության առանձնահատկությունները (կապ և փակիչ), խորիների թերթախոսի կազմության ծագումը: Մարմնակազմության պարզացումը քիչ շարժական կամ անշարժ կենսակերպի կապակցությամբ: Թերթախոսի կավորների ապղմանին և թրթուրային զարգացումը: Թերթախոսի կավորների տարածումը: Թերթախոսի կավորների դրական և բացասական նշանակությունը մարդու համար (վոստեներ և ուտելի խեցեմարմիններ, սատափ, մարգարիտ, «նավապորդ» փայտ կրծողի աված վնասները), արդյունագործական խեցեմարմինները և ՍՀՄ-ում:

4. Գլխոտանիների անատոմա-ֆիզիոլոգիական բնութագիրը՝ վորպես փափկամարմինների տիպի մեջ բարձրակարգ խոռոք։ Նրանց մարմնի կազմությունը, կենսակերպը և տարածումը։ Գլխոտանիների յերկրաբանական անցյալը (ամմոնիտներ և բենդնիտներ), ժամանակակից նառափիլուսների ցեղի խորը հնությունը։ Խեցիի ռեգուլյարիան և նրա վերափոխվելը ներքին կմախքի յերկխորհավոր գլխոտանիների մեջ։

Փափկամարմինների ծագումը և նրանց եվոլյուցիայի տարրեր ուղղությունները։ Մեզոզոյան երայի վերջում գլխոտանիների ձևերի մեծամասնության անհետանալու հավանական պատճառները և փափկամարմինների ավելի ստորակարգ խմբերի շարունակական ծագկումը։ Փափկամարմինների նշանակությունը, վորպես դեկավարող բրածոների։ Փափկամարմինների նշանակությունը կրի շրջանառության մեջ։

## Գործնական պարապմունքներ

- Անատոմի հերձումը։
- Խիունջի հերձումը։
- Թերթախոփիկավորների և փորոտանիների դանազան ներկայացուցիչների ուսումնասիրություն։
- Գլխոտանիների արտաքին մորֆոլոգիայի ուսումնասիրություն։

## VII. ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐԻ ՏԻՊԸ (Arthropoda)

Հոդվածոտանիների տիպի բնորդանուր բնութագիրը։ Խիտինային ծածկույթը, վորպես հիմնական առանձնահատկություն, վորով հոգվածոտանիները տարբերվում են ողավոր վորդերից։ Նրա ֆիզիոլոգիական նշանակությունը։ Հոդվածոտանիների տիպի բաժանումը յենթատիպերի՝ խոփիկաշունչների (Branchiata) և տրախեաշունչների (Tracheata)։

## I. ԽՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐԻ ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐԻ (Branchiata)

1. Խեցգետնանմանների անատոմա-ֆիզիոլոգիական կազմության բնութագիրը գետի խեցգետնուու որինակի վրա։ Սեպմենտացիայի բնույթը և վերջավորությունների տիպը խեցգետնանմանների մասն Խեցգետնանմանների զարգացումը։ Նառալլիուսի թրթուրը, նրա կազմությունը և հետագա կերպարանափոխությունը (մետամորֆոզը)։ Խեցգետնանմանների կարգաբանությունը։ Բարձրակարգ և ստորակարգ խեցգետնների յենթադասերը և նրանց գլխավորագույն կարգերը։ Խեցգետնանմանների բիոլոգիան։ Նստակյաց և պարագիտ խեցգետնանմանների կազմության մասնագիտացումը և պարզացումը։ Ստորակարգ խեցգետնանմանների նշանակությունը ջրավագանների որգանական նյութերի շրջանառության և ժողովրդական տնտեսության մեջ (հասկացողություն ջրավագանների «կերպարավության» մասին)։ Արդյունագործական խեցգետնանմանների։

2. Տրիլոբիտների տնկը դասը (Trilobita)։ Տրիլոբիտների կազմության առանձնահատկությունները և յերկրաբանական տարածումը։ Նրանց նշանակությունը հոգվածոտանիների ֆիլոպենիան հասկանալու համար։

3. Խեցգետնակարի էներգիա կամ մերոսական էներգիա կամ էներգիա կամ էներգիա (Palaeostreaca s. Merostomata)։ Նրանց արտաքին կազմության և զարգացման առանձնահատկությունները և ժամանակակից աշխարհագրական տարածումը։

4. Սարդանմանների դասը (Arachnoidea)։ Սարդանմանների արտաքին և ներքին կազմության բնութագիրը սարդի որինակի վրա։ Նրա հարմարվածության գծերը ցամաքի միջավայրին։ Դլամավորագույն կարգերի առանձնահատկությունները (կարիճներ, սոլվուզներ, սարդեր, խոտաքաղներ, տիզեր)։ Սարդանմանների բիոլոգիան, թռւնափոր սարդանմաններ, վորոնք գտնվում են ԽՍՀՄ-ի սահմաններում (կարիճներ, կարակուրտներ, տարանտուլներ)։ Վոստայնագործ սարդերի «ինդուստրիան» և նրանց գործունեյության բնազդական բնույթը։ Տիզերը, վորպես պարագաներ և վորպես ինֆեկցիոն հիվանդու-

թյունների փոխանցող վորպես պաշարեղենների զնասատուներ  
Խորհրդական հողվածոտանիների ֆիլոգենիան և նրանց  
յերկրաբանական հնությունը Խեցգետնակարիճների խմբի նշան  
նակությունը խեցգետնանմանների ծագումը հասկանալու հա-  
մար, վոր նրանք ծագել են ջրային ձևերից և պատկանում են  
խորհրդական յերկրաբանին:

## II. ՏՐԱԽԵԾՈՒԽՆՉԵՐԻ ՑԵՆԹԱՑԻՊԸ (Tracheata)

1. Ն ա խ ա տ ր ա խ ե լ ա ն ն ե ր ի դ ա ս ը (Protracheata): Նախատրախեականների արտաքին և ներքին կազմությու-  
նը և նրանց կազմվածքի այն գծերը, վորոնք մոտեցնում են  
նրանց ողավոր վորդերին և տրախեշունչ հողվածոտանիներին:  
Աշխարհագրական տարածումը և նախատրախեականների բիոլո-  
գիան:

2. Բ ա զ մ ո տ ն ա ն ի ն ե ր ի դ ա ս ը (Myriapoda): Արտա-  
քին և ներքին կազմության համառոտ բնութագիրը: Բազմոտա-  
նիների յերկու հիմնական խմբերը՝ ցթնավուներ և յերկույթ-  
վոտանիներ, նրանց եկոլոգիան և տարածումը:

3. Մ ի ջ ա տ ն ե ր ի դ ա ս ը (Insecta): Միջատի արտաքին  
մորֆոլոգիան և ներքին կազմությունը: Միջատների շնչառության  
և արտաթորության համակարգերի կազմության առանձնահատ-  
կությունները անկատար արյան ցրջանառության կազմակցու-  
թյամբ: Բերանի ապարատի զանազան տիպերը սննդառության  
տարբեր միջոցների կազմակցությամբ: Զիթ կազմությունը և սաղմ-  
նային պարզացումը: Լրիվ և թերի կերպարանափխություն հարա-  
նյակային ստաղիայի նշանակությունը:

Միջատների կարգարանության հիմունքները: Նախաթիւստ  
միջատներ (Apterygota) և թերալորներ (Pterygota): Թեւալոր  
միջատների գլխավոր կարգերը (ուղղաթեր, շերեփակոթեր, վրջի-  
ներ, կուճիթավորներ, կարծրաթեանիներ, թեփաթեավորներ,  
ցանցաթեավորներ, յերկթեանիներ):

Միջատների բազմազանությունը և լայն տարածումը: Նը-  
րանց կարևոր նշանակությունը բնության ընդհանուր կյանքում  
և մարդկային պրակտիկայի համար: Միջատները և ծաղիկները:  
Միջատները բուսականության վեասատուներ: Նրանց տարբերիչ  
հատկանիշները և բանջարանոցի, սլողատու այգու, դաշտի և

անտառի գլխավորագույն վնասատուների բիոլոգիան: Լվիճների  
բիոլոգիական առանձնահատկությունները (պարթենոգենեզ, սե-  
րունդների հաջորդումը, միզրացիա): Գյուղատնտեսության վնա-  
սատուների գեմ պայքարելու գործում թեորիայի և պրակտիկա-  
յի միանությունը: Վնասատուների գեմ պայքարելու հիմնական  
մեթոդները (ֆիղիկական, քիմիական, բիոլոգիական, աղրիկուլ-  
տուրական) և նրանց զարգացումը սոցիալիստական տնտեսու-  
թյան պայմաններում: Շտեմարանային վնասատուները և պայ-  
քար նրանց դեմ: Անմիջապես մարդու և նրա ընտանի անասուն-  
ներին վնասող միջատներ: Պարազիտ միջատների գերը հիվան-  
դություններ տարածելու մեջ:

*11-2676292*

Մարդու ձեռքով բուժվող և ոգտակար պրոդուկցիա տվող  
միջատները: Մեղվի բնական պատմությունը: Նրա բիոլոգիական  
առանձնահատկությունները, վորպես հիմք մեղվարուծության: Մեղ-  
վի ընտանիքի և «հասարակական» միջատների ֆիղիոլոգիական  
պոլիմորֆիզմը և ծագման հարցը: Թթի շերամը, վորպես լիովին ըն-  
տանիցրած միջատի որինակ:

Միջատների տարածվածությունը պայմանավորող պաշտպա-  
նողական գույններ, պաշտպանողական նմանությունը, միմիկրիան  
և ուրիշ բիոլոգիական հարմարանքները: Վնասատու միջատների  
մասայական յերևացումը և այն պայմանները, վորոնք վորոշում  
են միջատների ֆառմայի թվական կազմի տառանումը:

Միջատների պսիխիկական և նրա վորակական յուրահատկու-  
թյունը:

Միջատների ֆիլոգենիան: Արտաքին խիտինային ծած-  
կությամբ կամ քիմիական նշանակությունը, վորպես հարմարվողաւթյան, վո-  
րը պայմանավորում եցամաքի միջավայրին ընտելանալը: Միջատ-  
ների դասը կազմող և ցամաքային մանր ձևերի բազմազանությունը:

## Գործնական պարապմունքներ

1. Գետի խեցգետնի արտաքին մորֆոլոգիան և ներքին  
կազմությունը (հերձում, առանձին վերջավորությունների պատ-  
րաստումը):



2. Ստորակարդ խեցգետնանմաններ (գաֆնիաներ և ցելոպաներ—կենդանի մատերիալ:

3. Մարդանմաններ—զանազան կարգերի արտաքին մոլոգոգիան:

4. Միջատների արտաքին մորֆոլոգիան (խավարասերի մասնառումը, զանազան տիպի բերանի մասերի պատրաստումը:

5. Միջատների անատոմիան (խավարասերի կամ լուղորդ բզեզի հերձումը):

6. Միջատների վորոշումը մինչև կարգերը և ընտանիքները:

7. Միջատների առանձին խմբերի վորոշումը մինչև ցեղերը և տեսակները:

8. Ծանոթություն կարևորագույն վնասատուների հետ (կուլտիվաների դիտում):

## VII. ՓՇԱՄՈՐԹՆԵՐԻ ՏԻՊԸ (Echinodermata)

Փշամորթների կազմության հիմնական գծերը: Ծովաստղի անատոմիան, վորպես փշամորթների տիպի ներկայացուցիչ: Փշամորթների կարգաբանությունը, առանձին դասերի համառոտ բնութագրությամբ: Փշամորթների բիոլոգիան և տարածումը: Փշամորթների սաղմանային գարգացման առանձնահատկությունները: Փշամորթները, վորպես յերկրորդական բերան ունեցող կենդանիներ: Փշամորթների գարգացումը յերկողման սիմետրիկ թրթուրներից: Փշամորթների յերկրաբանական անցյալը, նրանց փիլոգենիան և ճառագայթավոր սիմետրիայի ծագման խնդիրը:

Փշամորթների (տրեելանգներ) արդյունագործական նշանակությունը:

## Գործնական պարապմունքներ

1. Ծովաստղի հերձումը:

2. Ծովվողնու և նոլոթուրիայի հերձումը և արտաքին դիտումը:

## IX. ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Անվողնաշարավոր կենդանիների եվոլյուցիոն գարգացման հիմնական ուղղությունները: Նախակենդանիները, վորպես ժամանակակից պայմաններին լավ հարմարված խումբ, բայց կազմվածքի նախնական միարժիշտ տիպը պահպանած: Յերկերտանի կենդանիները՝ սպունգներ և աղեղորշավորներ, նրանց գարգացման տարբեր ուղիները և սպունգների առանձնահատուկ դիքը մյուս բազմարժիշտ կենդանիների միջև: Ճառագայթավոր սիմետրիան և յերկողմանի սիմետրիայի ծագումը: Յեռաշերտ կենդանիները և նրանց գարգացման զանազան ուղիները: Մարմնի յերկրորդային խոսոչի—ցյումի գարգացումը: Յամաքային հորվածոտանիները, վորպես կենդանական աշխարհի գագաթներից մեկը: Փշամորթների, վորպես յերկրորդական բերան ունեցող կենդանիների, հակադրումը մյուս յեռաշերտ անվողնաշարավորներին—նախարերան կենդանիներին: Փշամորթների ճառագայթային սիմետրիայի յերկրորդային ծագումը: Ավելի պրիմիտիվ կամ պարզացրած կազմություն ունեցող տիպերի պահպանման նպաստող պայմանները ավելի բարձր տիպերի կողքին (հատկանիշների խոտորման ուսմունքի տեսակետից):

## ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ДОГЕЛЬ—Учебник зоологии беспозвоночных. Биомедгиз 1937г.

2. МАТВЕЕВ (ред.)—Курс зоологии, ч. I. Учпедгиз. 1938г

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԶԵՐՆԱՐԿՆԵՐ

3. ПАВЛОВСКИЙ—Руководство к практическому изучению зоологии.

4. АВЕРИНЦЕВ—Руководство к практическим занятиям по зоологии.

5. БОГДАНОВ-КАТЬКОВ—Практическая энтомология.

6. ФИЛИПЬЕВ (ред.)—Определитель насекомых.

7. РАЙКОВ и РИМСКИЙ-КОРСАКОВ.—Зоологические экскурсии,

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ ԱՆՎՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒ-  
ԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՍԱՆԿՈՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բնագիտության ֆակուլտետի I կուրսի համար հաշվի յև  
առնված—դասընթացին՝ 178 ժամ:

Անվողնաշարավորների կենդանաբանության սխտեմատիկ  
դասընթացին նախորդում և մի ներածական մաս—«Կենդանաբա-  
նության ներածություն», վորին սրինտիր կերպով հատկացվում  
և 18 ժամ դասախոսություն և 18 ժամ գործնական աշխատանք:  
Այդ «Ներածությունը» ընդհանուր և թե անվողնաշարավորների  
կենդանաբանության և թե վողնաշարավորների կենդանաբանու-  
թյան համար; Կենդանաբանության «Ներածականը» կազմված և  
յերկու բաժնից՝

ա. Կենդանաբանության պատմության համառոտ ակնարկից  
և կենդանաբանության առարկայի և խնդիրների վորոշումից և  
բ. բջջի ծանոթության և զարգացման նվիրված մի բաժնից, վո-  
րի մեջ տրվում և սխտեմատիկ դասընթացի նորմալ յուրացման  
համար անհրաժեշտ մատերիալ:

II—VIII: բաժիններն իրենց մեջ պարունակում են անվող-  
նաշարավոր կենդանիների տիպերի սխտեմատիկ տեսությունը,  
ընդվորում առանձին ուղաղըություն և դարձված ուսումնասիրե-  
մբք խմբերի ֆիլոգենետիկ հարաբերությունների բացատրու-  
թյան վրա, մարմնակազմի և կենսակերպի կազի վրա, վոր ծա-  
գում և եվլուցիայի պրոցեսում և գործնական նշանակություն ունե-  
ցող ձևերի վրա (դրական և բացասական):

IX բաժնում տրվում է համառոտ յեղբափակում անվող-  
նաշարավորների եվլուցիայի հիմնական ուղղությունների բա-  
ցատրությունը և ամփոփումները:

178 ժամից—90-ը հատկացվում է դասախոսությունների և 88  
ժամը—գործնական պարապմունքների:

Ժամերի բաշխման ցուցակը ըստ բաժինների

I. Կենդանաբանության ներածությունը  
ժամ. գործ. պար. ընդամենը  
ա. Պատմություն, առարկան և խնդիր. 6 — 6

	դաս.	գործ.	պ.	ընդամենը
Բ. Բչիջ և զարգացում	12	18		30
II. Նախակենդանիներ	10	10		20
III. Սպունգներ	4	4		8
IV. Աղեխորշավորներ	8	8		16
V. Վորոկեր	18	18		36
VI. Փափկամարմիններ	8	8		16
VII. Հողվածոտանիներ	18	18		36
VIII. Փշամորթներ	4	4		8
IX. Յեղբափակում	2	—		2

90 ժ. 88 ժ. 178 ժամ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0928196

22 НОЯ. 1938

ԳԻՒԸ 25 4.

11  
28782

## ПРОГРАММА

Курса зоологии беспозвоночных  
для педагогических институтов

Изд. Педагогич. института, Ереван 1938